ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-4-2-Ա

ք. Երևան 07.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 7-ի նիստում քննարկեց 2021 թվականի ապրիլի 12-ին «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված դիմումը «MASTER» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ԱԾՄԴ 34-րդ դասի «ծխախոտ, սիգարետներ, թութուն» ապրանքների համար:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «MASTER» ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2017 թվականի դրությամբ լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ն հանդիսանում է տվյալ ոլորտում խոշոր արտադրող, հաստատել է իր կայուն տեղը հայկական շուկայում և ունի արտադրատեսակների լայն ընտրանի: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն ներկայացված ապրանքային նշանը կարող է ճանաչվել հանրահայտ ՀՀ-ում «ծխախոտ, սիգարետներ, թութուն» ապրանքների համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների

քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը «MASTER» ապրանքային նշանը 01.01.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 34-րդ դասի «ծխախոտ, սիգարետներ, թութուն» ապրանքների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ամբողջովին բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ